

ԱՄՀ գործադիր խորհուրդն ավարտում է 2019 թ. IV հոդվածի խորհրդակցությունը Հայաստանի Հանրապետության հետ

31 մայիսի 2019 թ.

2019 թ. մայիսի 17-ին Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գործադիր խորհուրդն ավարտեց IV հոդվածի շրջանակում խորհրդակցությունը [1] Հայաստանի Հանրապետության հետ:

Հայաստանի տնտեսության լավ կատարողականը պահպանվում է: 2018 թ. տնտեսական ակտիվություն, մասնավոր ներդրումների աշխուժացման և դրամական փոխանցումների շարունակվող վերականգնման օգնությամբ, ավելացավ 5.2 տոկոսով, իսկ սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) տարեկան գնաճը մարտին իջավ մինչև 1.9 տոկոս: Ընթացիկ հաշվի պակասուրդն ընդլայնվեց՝ 2018 թ. կազմելով ՀՆԱ-ի 9.1 տոկոսը, հիմնականում ի հաշիվ կապիտալ ապրանքների ներմուծման ավելի բարձր, առաջնային եկամտի ավելի ցածր ցուցանիշների և գնահատման որոշ հարցերի: Հարկաբյուջետային կոնսոլիդացումն ընթանում է նախատեսված հունով, ինչին աջակցում են հարկային վարչարարության ուժեղ ջանքերը՝ 2018 թ.-ին ՀՆԱ-ի նկատմամբ պետական պարտքի մասնաբաժնի նվազմամբ: Պահպանվում են կայուն դրամավարկային և ֆինանսական պայմանները՝ փոխարժեքի վրա սահմանափակ ճնշմամբ: Բանկային համակարգը լավ կապիտալացված է, վարկավորման աճը աջակցել է տնտեսական ակտիվությանը: Կառուցվածքային ճակատում՝ 2017 թ. դեկտեմբերին հարկաբյուջետային կանոնը վերանախագծվեց և բարելավվեց: 2018 թ. հուլիսին ուժի մեջ մտավ կենսաթոշակային ամբողջական բարեփոխումը: Կազմվել է պետություն-մասնավոր գործընկերության մասին օրենքի նախագիծ՝ քննարկելով զարգացման հարցերով միջազգային գործընկերների, այդ թվում՝ ԱՄՀ-ի հետ: Նոր կառավարությունը խոստացել է արագացնել բարեփոխումները, մասնավորապես՝ վճռականորեն պայքարել կոռուպցիայի դեմ և բարելավել կառավարումը՝ ներառական և կայուն աճը խթանելու նպատակով:

Նայելով առաջ՝ 2019 թ. սպասվում է աճի չափավորում ավելի կայուն՝ 4.6 տոկոս մակարդակում, միջնաժամկետ հեռանկարում կայունացում 4.5 տոկոսի շուրջ: Միջնաժամկետ հեռանկարում իշխանությունները՝ բարեփոխումների աջակցությամբ նպատակադրում են ավելի բարձր աճ: Կանխատեսվում է, որ ՍԳԻ գնաճը հաջորդ երկու տարիներին կմոտենա ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) 4 տոկոս միջնաժամկետ թիրախին: Սպասվում է, որ 2019 թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կբարելավվի՝ կազմելով ՀՆԱ-ի 7.3 տոկոսը, երբ ժամանակավոր գործոնները սկսեն թուլանալ և աստիճանաբար կիջնի ավելի կայուն՝ ՀՆԱ-ի շուրջ 6 տոկոսը կազմող

մակարդակի՝ արտահանման աճի շարունակմանը և ներմուծման որոշակի չափավորմանը զուգընթաց:

Աճի նվազման ուղղությամբ ռիսկերը հիմնականում արտաքին են: Դրանք թվում են՝ համաշխարհային առևտրի լարվածությունների ավելացումը և համաշխարհային ֆինանսական շուկաների տատանողականությունը, որոնք կարող են նվազեցնել առևտրային գործընկերների տնտեսական աճը, դրամական փոխանցումները և ապրանքների գները: Աճի վերընթաց ռիսկերի առումով՝ բարեփոխումների օրակարգի ավելի արագ առաջընթացը կարող է խթանել ներուժային աճը:

Գործադիր խորհրդի գնահատումը [2]

Գործադիր տնօրենները համաձայն էին աշխատակազմի գնահատականին: Նրանք դրվատեցին իշխանությունների՝ վերջին տարիներին մակրոտնտեսական կայունության պահպանման և քաղաքականության կառուցվածքն ամրապնդելու ջանքերը: Տնօրենները նշեցին, որ Հայաստանն արտաքին ցնցումների նկատմամբ մնում է խոցելի և դեպի դինամիկ, մասնավոր հատվածի կողմից առաջնորդվող, զարգացող շուկայական տնտեսությանն անցման իր ճանապարհին հանդիպում է կառուցվածքային մարտահրավերների: Այս համատեքստում նրանք ողջունեցին նոր կառավարության բարեփոխումների օրակարգը, հատկապես՝ կառավարման և գործարար միջավայրի բարելավմանը, կայուն և ներառական աճի խթանմանն ուղղված հակակոռուպցիոն ջանքերը: Տնօրեններն ընդգծեցին, որ բարեփոխումների հաջողության համար իրական շահագրգռվածությունը և նրանց վճռական իրականացումը առանցքային են:

Տնօրեններն աջակցություն հայտնեցին իշխանությունների հարկաբյուջետային կոնսոլիդացման ծրագրերին, որոնք առաջնորդվում են հարկաբյուջետային կանոնով և որոնց նպատակը միջնաժամկետ հեռանկարում կենտրոնական կառավարության պարտքը ՀՆԱ-ի 50 տոկոսից ցածր մակարդակի իջեցնելն է, միաժամանակ կարևորագույն ծախսերի համար բավարար հարկաբյուջետային հնարավորությունների պահպանմամբ: Նրանք նկատեցին, որ իշխանությունների հարկային բարեփոխումները, այդ թվում՝ եկամտային հարկի համակարգի պարզեցումը, նպատակաուղղված են հարկային պարտավորությունների կատարման բարելավմանը և տնտեսական ակտիվությանն աջակցմանը: Սակայն նրանք ուշադրություն հրավիրեցին այն հանգամանքին, որ եկամուտների նվազումից և բաշխվածության վատթարացումից խուսափելու համար անհրաժեշտ է հետևողականորեն մոնիթորինգ իրականացնել: Տնօրեններն ընդգծեցին նաև ուղեկցող փոխհատուցման կայուն միջոցառումների և հարկային վարչարարության ուժեղ ջանքերի անհրաժեշտությունը: Եկամուտների հավաքագրման ամրապնդումը կօգնի պարտքի կայունության պահպանման հարցում՝ միաժամանակ հնարավորություններ ստեղծելով անհրաժեշտ աճին նպաստող ենթակառուցվածքների և սոցիալական

ծախսերի համար: Այս առումով խրախուսվեցին պետական ներդրումների կառավարման բարելավմանն ուղղված հետագա ջանքերը:

Տնօրենների կարծիքով՝ դրամավարկային քաղաքականության ներկա ուղղությունը մնում է նպատակահարմար, և անհրաժեշտ է քաղաքականության շեշտադրումը պահել գնաճն իր միջնաժամկետ նպատակակետին վերադարձնելու վրա: Միևնույն ժամանակ նրանք ընդգծեցին արտաքին ցնցումներին արձագանքելիս փոխարժեքի շարունակական ճկունության, արտարժույթային պահուստների համարժեք մակարդակի պահպանման և մրցունակության պաշտպանության կարևորությունը: Արտարժույթի շուկայի միջամտությունները պետք է սահմանափակված լինեն՝ կանխելով շուկայի չկարգավորված տատանումները:

Տնօրենները խրախուսեցին դրամավարկային և ֆինանսական ոլորտի քաղաքականության կառուցվածքի հետագա ամրապնդումը: Գնաճի նպատակադրման և դրամավարկային փոխանցման մեխանիզմի արդունավետության բարձրացման համար նրանք կարևորեցին լավ գործող միջբանկային շուկայի զարգացման, հաղորդակցության բարելավման և ապադրվարացման խթանման անհրաժեշտությունը: Ավելի դիմակայուն ֆինանսական համակարգի աջակցման և մակրոպրոդեցիալ դաշտի ամրապնդման հարցում Տնօրենները ողջունեցին արտարժույթային իրացվելիության բուֆերների ուժեղացման իշխանությունների հանձնառությունը և խրախուսեցին կապիտալի շուկաների հետագա զարգացման և ֆինանսների հասանելիության մեծացման միջոցառումները:

Տնօրենները կարևորեցին կառուցվածքային բարեփոխումների առաջնությունը՝ կայուն և ներառական աճը խթանելով այնպիսի միջոցառումներով, որոնցով խրախուսվում է մասնավոր հատվածի զարգացումը, ներգրավվում է ավելի շատ ՕՈՒՆ և մեծանում է դիվերսիֆիկացումը: Նրանք ողջունեցին Կառավարության՝ իր հնգամյա ծրագրի միջոցով կառավարումն ամրապնդելու, մրցակցությունը լավացնելու և գործարար միջավայրը բարելավելու բարձր հանձնառությունը: Խրախուսվեցին նաև մարդկային կապիտալի բարելավման և աշխատաշուկայում կանանց մասնակցության խթանման միջոցառումները:

Հայաստանի Հանրապետության հետ IV հոդվածի շրջանակում հաջորդ խորհրդակցությունն ակնկալվում է անցկացնել Հիմնադրամի ծրագրերով անդամների համար խորհրդակցական շրջափուլի վերաբերյալ Գործադիր խորհրդի որոշմանը համաձայն:

Աղյուսակ 1. Հայաստան՝ ընտրված տնտեսական և ֆինանսական ցուցանիշներ, 2016–23

	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
	Փաստ.	Փաստ.	Փաստ.				Կանխատեսումներ	
Ազգային եկամուտ և գներ.								
Իրական ՀՆԱ (տոկոսային փոփոխություն)	0.2	7.5	5.2	4.6	4.5	4.5	4.5	4.5
Վերջնական սպառման ծախսեր, աճին նպաստ. չափը	-0.9	7.4	2.7	3.3	3.4	2.7	3.5	2.1
Հիմնական կապիտալի համախառն կուտակում, աճին նպաստ. չափը	-2.4	1.5	0.8	6.8	4.6	5.0	4.2	3.1
Պաշարների փոփոխություններ, աճին նպաստ. չափը	0.7	1.1	4.0	-4.6	0.0	0.0	0.0	0.0
Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում, աճին նպաստ. չափը	3.1	-1.2	-1.8	-1.2	-3.4	-3.1	-3.2	-0.6
Համախառն ներքին արդյունք (միլիարդ դրամ)	5,067	5,569	6,003	6,549	7,102	7,745	8,437	9,169
Համախառն ներքին արդյունք՝ մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	3,524	3,872	4,186	4,533	4,764	5,068	5,386	5,710

ՍԳԻ (Ժամանակահաշրջանի միջին, տոկոսային փոփոխություն)	-1.4	1.0	2.5	2.1	3.0	3.7	4.0	4.1
ՍԳԻ (Ժամանակահաշրջանի վերջ, տոկոսային փոփոխություն)	-1.1	2.6	1.8	2.5	3.3	3.8	4.1	4.3
ՀՆԱ դեֆլյատոր (տոկոսային փոփոխություն)	0.3	2.2	2.5	4.3	3.8	4.4	4.2	4.0
Գործազրկության մակարդակ (տոկոս)	20.2	18.6	18.1	17.9	17.7	17.8	17.7	17.6
Ներդրումներ և խնայողություններ (ՀՆԱ-ի տոկոս)								
Ներդրումներ	18.0	19.0	22.4	23.6	24.1	24.4	24.9	25.6
Ազգային խնայողություններ	15.8	16.6	13.3	16.3	16.8	17.5	18.4	19.4
Փող և վարկ (Ժամանակահաշրջանի վերջ)								
Փողի բազա (տոկոսային փոփոխություն)	13.1	-1.0	17.8	9.0	9.5	8.5	8.5	8.5
Փողի զանգված (տոկոսային փոփոխություն)	17.5	18.5	7.4	7.0	9.5	8.5	8.5	8.5
Մասնավոր հատվածի վարկավորման աճ (տոկոսային փոփոխություն)	6.0	16.5	17.2	16.0	15.5	13.0	12.5	11.0

Կենտրոնական
կառավարության
գործառնություններ (ՀՆԱ-ի
տոկոս)

Եկամուտներ և
դրամաշնորհներ

21.4 21.2 21.7 22.6 22.8 22.8 22.9 23.2

Որից՝ հարկային եկամուտներ

20.1 20.2 20.6 21.0 21.3 21.5 21.7 21.9

Ծախսեր

27.0 26.0 23.5 25.2 24.9 24.7 24.7 25.0

Ընդհանուր հաշվեկշիռը՝
դրամարկղային սկզբունքով

-5.6 -4.8 -1.8 -2.5 -2.1 -1.9 -1.8 -1.8

Պետական և պետության
կողմից երաշխավորված
(ՊՊԵ) պարտք

56.7 58.9 55.8 54.6 53.7 52.3 51.1 50.1

Կենտրոնական
կառավարության ՊՊԵ
պարտք (տոկոս)

52.0 53.7 51.4 51.0 50.8 50.2 49.5 49.0

Արտարժույթային պարտքի
մասնաբաժինը (տոկոս)

80.9 81.1 77.5 77.6 76.5 75.4 73.9 74.3

Արտաքին հատված

Ապրանքների և
ծառայությունների
արտահանում (միլիոն ԱՄՆ
դոլար)

3,500 4,307 4,669 5,074 5,361 5,744 6,137 6,625

Ապրանքների և ծառայությունների ներմուծում (միլիոն ԱՄՆ դոլար)	-4,516	-5,710	-6,583	7,132	7,467	7,892	8,371	8,875
Ապրանքների և ծառայությունների արտահանում (տոկոսային փոփոխություն)	11.6	23.0	8.4	8.7	5.7	7.2	6.8	7.9
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (տոկոսային փոփոխություն)	2.2	26.4	15.3	8.3	4.7	5.7	6.1	6.0
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ՀՆԱ-ի տոկոս)	-2.3	-2.4	-9.1	-7.3	-7.3	-6.9	-6.5	-6.2
ՕՈԻՆ (զուտ, միլիոն ԱՄՆ դոլար)	272	228	266	296	318	346	376	407
Համախառն միջազգային պահուստներ (միլիոն ԱՄՆ դոլար)	2,204	2,314	2,249	2,284	2,373	2,418	2,468	2,633
Ներմուծման ծածկույթ 1/	4.6	4.2	3.8	3.7	3.8	3.5	3.3	3.4
Փոխարժեքը ժամանակաշրջանի վերջում (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	484	484	484	...	...	...	...	...
Միջին փոխարժեք (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	480	483	483	...	...	...	...	...

Աղբյուրները՝ Հայաստանի իշխանություններ և
Հիմնադրամի աշխատակիցների
հաշվարկները և կանխատեսումները:

1/ Համախառն միջազգային պահուստներն՝ ըստ հաջորդ տարվա ապրանքների
և ծառայությունների ներմուծման ամիսների, այդ թվում՝ պահվող ՓՀԻ:

[1] ԱՄՀ Համաձայնագրի հոդվածների IV հոդվածի շրջանակում ԱՄՀ-ն անդամների
հետ անց է կացնում երկկողմ քննարկումներ, սովորաբար՝ ամեն տարի:
Աշխատակազմն այցելում է երկիր, հավաքում տնտեսական և ֆինանսական
տեղեկություններ և պաշտոնյաների հետ քննարկում երկրի տնտեսական
զարգացումներն ու քաղաքականությունները: Վերադառնալով ԱՄՀ
կենտրոնակայան՝ աշխատակազմը կազմում է զեկույց, որը հիմք է դառնում
Գործադիր Խորհրդի կողմից քննարկման համար:

[2] Քննարկումը եզրափակելիս Կառավարող տնօրենը, որպես Խորհրդի նախագահ,
ամփոփում է Գործադիր Խորհրդի տեսակետները, և այդ ամփոփումը փոխանցվում է
երկրի իշխանություններին: Ամփոփումներում օգտագործված վերապահումների
բացատրությանը կարելի է ծանոթանալ այս հղումով՝
<http://www.imf.org/external/np/sec/misc/qualifiers.htm>.